

«Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սեյսմիկ պաշտպանության մասին» 2002 թվականի հունիսի 12-ի ընդունված թիվ ՀՕ-376-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր պարբերություններ հետևյալ բովանդակությամբ՝

«**Գրասենյակ**» լիազոր մարմնի կազմում գործող սեյսմիկ պաշտպանության բնագավառում պետական կառավարման և (կամ) պետական քաղաքականության առանձին գործառույթներ իրականացնող մարմին:

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդված 1-ին մասի 1-ին կետում «ուղղությունները» բառից հետո լրացնել «գրասենյակի միջոցով» բառերը:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում «մատուցումը» բառից հետո լրացնել «գրասենյակի միջոցով» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: